ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» մայիսի 2025 թ. N 2-25

«ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի միջև 19.12.2024թ-ին կնքված, «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2025թ. կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6-Վ-1-5» մատակարարման պայմանագիրը /այսուհետ մատակարարման պայմանագիր/ միակողմանի լուծելու մասին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասով, վերը նշված մատակարարման պայմանագրի 2.1.7 կետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով խնամքի կենտրոնի տնտեսական, սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ տնօրենի տեղակալ Խաչատուր Բարսեղյանի 15.05.2025թ. զեկուցագիրը՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն թվականի մայիսի 21-ից միակողմանի լուծել ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ի հետ 19.12.2024թ-ին կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6-Վ-1-5» մատակարարման պայմանագիրը:

2. Հանձնարարել «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի գնումների համակարգման պատասխանատու Ա.Համբարձումյանին սույն որոշման մասին սեղմ ժամկետներում ծանուցել ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ին և կատարել մատակարարման պայմանագրից բխող անհրաժեշտ բոլոր գործողությունները:

ՏՆՕՐԵՆ՝ Ռ. ԽԼՈՅԱՆ